Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Գեղարքունիքի մարզի Գավառի 5 հիմն. դպրոց

Թեմա՝ Սովորողների մեջ ստեղծագործական ունակությունների զարգացումը «Մայրենի» առարկայի դասավանդման ընթացքում

Վերապատրաստող, մենթոր՝ Գոհար Շահինյան

Ուսուցիչ՝ Նորա Գոզեյան

Գավառ 2023

Ներածություն

«Վիքիպեդիա» ազատ հանրագիտարանում գրված է. «Ստեղծագործել նշանակում է սեփական հոգու դարբնոցում կոփել ձևեր, որոնք կարժևորեն մարդու կյանքը։ Յուրաքանչյուր իսկական արվեստագետ, երբեմն ինքն էլ չգիտակցելով, ստեղծում ու արտահայտում է իր ժողովրդի գիտակցությունը։ Ստեղծագործությունը ոչ միայն պատանեկան անմեղ տարերք է, այլ նաև հասուն անձի ձգտում է շարունակելու իր կյանքը մահվանից հետո։ Այն մարդկային այնպիսի դրսևորում է, որի միջոցով իրականանում է անձի ազդեցությունը աշխարհի վրա, այն կապված է մարդու ակտիվության հետ»։

Հոգեբանական բառարանում ստեղծագործելը մեկնաբանվում է հետևյալ կերպ. «Այնպիսի գործողություն, որը նոր և ինքնատիպ արդյունքների (մտքերի, վարկածների, հոգևոր և նյութական արժեքների) է հանգեցնում»[1] ։

Ըստ Հանրակրթության պետական չափորոշչի՝ միջնակարգ կրթության կարողունակություններից մեկը սովորել սովորելու կարողունակությունն է, ինչի միջոցով սովորողները ձևավորում են իրողություններին ստեղծագործական և նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ։

Կրթության ժամանակակից ռազմավարությունը պահանջում է աճող սերնդի ստեղծագործական ներուժի բացահայտում, դրսևորման հնարավորությունների ընդլայնում։ Սովորողները պետք է ունենան ոչ միայն կայուն գիտելիքներ, այլև կարողանան բարձր մակարդակով լուծել նոր ժամանակների առաջադրած խնդիրները։ Արդի կրթական համակարգի հիմնական խնդիրներից մեկը ստեղծագործական մտածողությամբ, ճանաչողական կարողությունների զարգացմամբ, գիտելիքներն ինքնուրույն համալրելու կարողությամբ օժտված և ժամանակի մարտահրավերներին դիմադրելու պատրաստ անձի դաստիարակումն է։ Նոր ժամանակների մարդը պետք է ի վիճակի լինի ինքնուրույն որոշումներ ընդունելու՝ առանց որևէ մեկի կարծիքից և դիրքորոշումից կախում ունենալու, իրերին և հասկացություններին կարողանա նորովի մոտեցում ցուցաբերել, չհամակերպվի

քարացած մտածողությանը, նոր լուծումներով և նոր առաջարկություններով փոխի մեր միջավայրը՝ արդի ժամանակաշրջանին համահունչ: Այդ նպատակով մանկավարժը որոնում է նոր ձևեր և մեթոդներ, ինքնակատարելագործվում է, մշակում է քայլեր, որոնք ուղղված են աշակերտների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների ձևավորմանը և զարգացմանը, նրանց՝ ուսումնական նյութի արագ յուրացմանը, աշակերտների ինտելեկտուալ կարողությունների և ունակությունների զարգացմանը: Մանկավարժական գործընթացի առաջնահերթ խնդիրներից է ստեղծագործական կարողությունների զարգացմանը ուղղված մեթոդների և քայլերի մշակումը՝ երեխաների կրթությանը զուգահեռ: Մանկավարժը գործուն քայլերով պետք է նպաստի կրթված, ինքնազարգացող և ինքնորոշվող, ստեղծագործող անհատի ձևավորմանը: Այսօրվա սովորողը վաղվա քաղաքացին է, երկրի առաջընթացի ակտիվ մասնակիցը: Այդ իսկ պատճառով կրթության և դաստիարակության գործընթացում ստեղծագործ անհատականության զարգացումը ժամանակակից հասարակության կարևոր խնդիրներից մեկն է:

Անհատականության և ստեղծագործական մտածողության հիմքը դրվում է նախադպրոցական և տարրական դպրոցական տարիքում: Ստեղծագործական մտածողությունից կախված է գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերումը: Հմտությունների, կարողությունները և գիտելիքների նկատմամբ մարդու ստեղծագործական մտածողությունը հանդես են գալիս իբրև որոշ հնարավորություն: Մեծ է դասավանդող ուսուցչի դերը ստեղծագործական, նախաձեռնող անհատականության ձևավորման գործում: Երբ աշակերտին դեռևս պակասում են կարողությունների և հմտությունների անհրաժեշտ համակարգ, կայուն գիտելիքներ, աշխատանքի ձևավորված հնարներ, պետք չէ հապշտապ եզրակացնել, թե նրա մոտ բացակայում է ստեղծագործական մտածողությունը: Քիչ չեն դեպքերը, երբ մանուկ հասակում երեխայի մոտ դեռևս չեն արտահայտվում և շրջապատի կողմից չեն գնահատվում նրա ստեղծագործական մտածողությունը, սակայն հետագայում բացահայտվում է նրա ողջ ներուժը: Ուսուցչի խնդիրը պետք է լինի անհատի ստեղծագործական ունակությունները զարգացնելը և երեխայի ստեղծագործական գործունեության փորձի ձևավորման համար պայմաններ ստեղծելը:

Սույն աշխատանքում փորձել ենք վեր հանել աշակերտների ստեղծագործական կարողությունների բացահայտմանը և կատարելագործմանը ուղղված քայլերը «Մայրենի» առարկայի դասաժամերին:

ՄՈՒՏՔ

Գրական ընթերցանության դասերին խնդիր է դրված զարգացնել աշակերտների ստեղծագործական կարողությունները, և այդ խնդրի լուծման համար անհրաժեշտ է հենց ուսուցչի գործունեությունը, նախաձեռնողականությունը, ստեղծագործական ուղիների որոնումը: Ստեղծագործություն սովորեցնելը նախևառաջ նշանակում է ստեղծագործական վերաբերմունք սովորեցնել աշխատանքին: Ստեղծագործական կարողությունների զարգացմանը նպաստում են դասերի ստեղծագործ, ընկերական մթնոլորտը, ուսուցչի և աշակերտների միջև հարգանքի և համագործակցության ապահովումը, յուրաքանչյուր երեխայի նկատմամբ ուշադրությունը, նույնիսկ ամենաչնչին հաջողությունը նկատելը և խրախուսելը: Դասարանում երեխաները պետք է ստանան ոչ միայն գիտելիքներ և հմտություններ, այլև ընդհանուր զարգացում: Ուսուցիչը պետք է պայմաններ ստեղծի աշակերտների ստեղծագործական կարողությունների դրսևորման համար, տիրապետի մարտավարությանը, տեխնոլոգիային, ունենա ծրագիր, որի իրականցմամբ կակտիվացնի աշակերտների հույզերը, երևակայությունը: Ուսուցչի վերաբերմունքը երեխաների ստեղծագործական գործունեության արդյունքներին շատ կարևոր է: Հարկավոր է զգույշ վերաբերմունք ունենալ երեխաների ստեղծածին, ոչ թե քննադատել, այլ ոգևորել, արտահայտել զարմանք և հիացմունք և այդպիսով հաստատել վստահություն և բաց հարաբերություններ աշակերտների հետ: Յուրաքանչյուր քննադատություն կարող է սահմանափակել ստեղծագործ մտքի ազատ թռիչքը, ստեղծել անվստահություն սեփական ուժերի հանդեպ, կաշկանդել ազատ խոսքը և մտածողությունը:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացման համար միաժամանակ աշխատում եմ երկու ուղղությամբ՝ երևակայության զարգացում և ստեղծագործականություն ձևավորող մտածողության որակների զարգացում: Տարվում են աշխատանքներ՝ մարզելու աշակերտի մտավոր հատկությունները՝ հիշողություն, ուշադրություն, ազատ մտածողություն, երևակայություն: Մշակվում է ստեղծագործական գործունեության համակարգված, նպատակային քայլաշար: Ճանաչողական և ստեղծագործական առաջադրանքների համակարգը հանգեցնում է ազատ մտածողության, մտքի սահունության և ճկունության, անսահման հետաքրքրասիրության, համարձակ լուծումներ առաջ քաշելու և զարգացնելու կարողության ձևավորմանը:

Դասերն ընթանում են հետևյալ չորս հաջորդական փուլերով՝

1) նախապատրաստում.

2) ստեղծագործական մտածողության խթանում.

3) որոնողական առաջադրանքների մշակում.

4) ստեղծագործական խնդիրների լուծում:

Առաջադրանքները տրվում են ամբողջ դասարանին: Նման առաջադրանքները ոչ թե գնահատողական, այլ կրթական և զարգացնող բնույթ ունեն: Նման աշխատանքը կենտրոնացնում է ուշադրությունը, զարգացնում է մի առաջադրանքից մյուսին արագ անցնելու կարողությունը: Աշակերտն ապրում է առաջադրանքի լուծման ուղիների ինքնուրույն որոնման, հայտնաբերման, ինքնադրսևորման, նորը ճանաչելու հաճույքն ու բերկրանքը: Նույնիսկ թույլ տված սխալն օգնում է նոր բան հայտնաբերելոն, անսպասելի հայացքներ ձեռք բերելուն, ուրիշների հանդեպ փոխվստահությանը,

հետագայում ճիշտ ընտրություն կատարելուն ։ Աշակերտը կարողանում է ընտրել և ճիշտ որոշումներ կայացնել, սեփական առաջընթացն ինքնուրույն վերահսկել։

Երեխաներին ստեղծագործական ինքնարտահայտմանը նպաստելու համար օգտագործվում են գրական ստեղծագործությունները, ներկայացվում են խնդրահարույց երևակայական կամ իրական իրավիճակներ, կյանքից և գրականությունից կոնֆլիկտային իրավիճակներ, որոնց միջոցով աշակերտները զարգացնում են վերլուծական և երևակայական միտքը, ձեռք են բերում իրենց միտքը արտահայտելու ունակություն: Հատկանշական է, որ միևնույն հուզական վիճակին տարբեր կերպ է արձագանքում ամեն մի աշակերտ:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐ

Ստեղծագործական կարողությունը դրսևորվում է աշակերտի յուրօրինակ, ոչ կաղապարային մտածողությամբ, լուծումները փնտրելու և որոշումներ կայացնելու ինքնուրույնությամբ, ճանաչողական հետաքրքրություն դրսևորելու, նոր բաներ բացահայտելու ցանկությամբ: Ստեղծագործական կարողությունների զարգացման մակարդակը որոշվում է հետևյալ կերպ.

1. **Ճանաչողական չափանիշով** բացահայտվում են աշակերտների գիտելիքները, ստեղծագործական կարողությունները, ստեղծագործական առաջադրանքների էությունը հասկանալը:
2. **Մոտիվացիոն - դրդապատճառային** չափանիշով պարզ է դառնում, թե որքան մեծ է աշակերտի ցանկությունը դրսևորելու իրեն և ապացուցելու բոլորին, որ ինքը ստեղծագործ և կարող անձնավորություն է:
3. **Գործունեության չափանիշով** բացահայտվում է աշակերտների՝ ստեղծագործական բնույթի առաջադրանքները անկաշկանդ կատարելու, ստեղծագործական երևակայությունը հեշտությամբ ակտիվացնելու, ոչ սովորական մտածելու և դրա միջոցով հետաքրքիր լուծումներ առաջարկելու ունակությունը:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1. Բարձր մակարդակ

Աշակերտները նախաձեռնող են և ինքնուրույն որոշումներ կայացնողներ, սովորաբար ազատ են արտահայտվում: Հնարամիտ են, ունեն վառ երևակայություն, մտածողությամբ տարբերվում են: Ուսուցչի աշխատանքը այսպիսի աշակերտների հետ ավելի հետաքրքիր է, առաջադրանքները ուղղված են ստեղծագործական մտածողության զարգացմանը և ծավալմանը:

2. Միջին մակարդակ

Այսպիսի մակարդակ ունեցող աշակերտները աշխատում են հիմնականում ինքնուրույն, բայց նրանց առաջարկած լուծումները օրիգինալ չեն: Երեխան հետաքրքրասեր է, գաղափարներ է առաջ քաշում, բայց մեծ ստեղծագործականություն չի ցուցաբերում:

3. Ցածր մակարդակ

Այս մակարդակի աշակերտները կարողանում են գիտելիքներ ձեռք բերել, որոշակի գործողություններ կատարում են: Սակայն պասիվ են: Նրանց ստեղծագործական աշխատանքի մեջ ընդգրկելու համար ուսուցչից պահանջվում են լրացուցիչ ջանքեր: Նրանք ավելի երկար են մտածում, նրանց ընդհատելով կամ անսպասելի հարցեր տալով՝ շփոթեցնում ենք, կարող են կաշկանդվել, լռել: Նրանց պատասխանները կարծրատիպային են, չեն դրսևորում անհատականություն, անկախություն, նախաձեռնող չեն, գնում են ավանդական լուծումների:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ՏԱՐԲԵՐ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Կիրառում եմ տարբեր մեթոդներ:

1) «Հնարել պատմություն գոյություն չունեցող կենդանու մասին»

Երեխային հանձնարարվում է պատմություն հորինել մի անսովոր, չտեսնված արարածի մասին, որը նախկինում ոչ մի տեղ չի եղել, ոչ ոք նրա մասին չի լսել և նրան չի տեսել: Այն չպետք է նման լինի ոչ մի մուլտֆիլմի կամ հեքիաթի հերոսի:

2) «Երկու բառ»

Աշխատանքի համար վերցնում ենք 2 բառ: Թող ամեն մի բառը տարբեր աշակերտներ առաջարկեն: Կարող են թղթի վրա գրել և առանձին-առանձին ներկայացնել, որպեսզի մեկը մյուսի գրածը չիմանա: Ստացվում է իրար հետ կապ չունեցող 2 բառ, ասենք՝ պատուհան և ճանապարհ, կամ՝ երկինք և գնացք: Աշակերտները հնարում են պատմություն, որտեղ նշված բառերը դառնում են ստեղծագործության հերոսներ: Անհրաժեշտ է, որ երկու բառերից մեկը բավականաչափ օտար լինի մյուսին, որպեսզի նրանց միասին կիրառությունը ինչ-որ չափով անսովոր լինի: Միայն այդ դեպքում երևակայությունը կակտիվանա՝ ձգտելով նշված բառերի միջև հետաքրքիր կապ գտնել:

3)«Երեք առարկա և մեկ պատմություն»

Խաղացողին իրար հետ ոչ մի կերպ չկապվող 3 առարկա ենք տալիս, ասենք՝ գրիչ, կավիճ, աթոռ, և առաջարկում ենք դրանք գործի դնել՝ տեսարան հորինել ու ցուցադրել: Իրական առարկաները, որոնք կարող է տնտղել, շոշափել, շուռումուռ տալ, երևակայության համար առավել ամուր նեցուկ են, քան բառերը. այս դեպքում երևակայությունը ազատ ճախրում է: Երեխաների համար անսովոր և հետաքրքիր առաջադրանք է սա, որովհետև իրենց շատ ծանոթ առարկաները երևակայության ուժով սկսում են բնավորություն ձեռք բերել, արկածների հանդիպել, սխրագործություններ կատարել և հերոսանալ:

4) «Նոր հերոս ծանոթ հեքիաթում»

Ծանոթ հեքիաթից բառեր ենք վերցնում և ավելացնում ենք հեքիաթի բովանդակության հետ կապ չունեցող բառ: Օրինակ՝ «Մոխրոտը» հեքիաթից վերցնում

ենք «պարահանդես», «արքայազն», «քույրեր», «կեսգիշեր», «կախարդուհի» բառերը և ավելացնում ենք ընդհանրապես կապ չունեցող «համակարգիչ» բառը:

Նման խաղ-վարժության միջոցով հետազոտում ենք երեխայի՝ նոր և փաստերի որոշակի շարքի նկատմամբ անսպասելի տարրին արձագանքելու կարողությունը, նման բառն արդեն հայտնի սյուժեում օգտագործելու, սովորական բառերը նոր համատեքստին համահունչ դարձնելու հմտությունը: Արդյունքներն ուշագրավ են ստացվում:

5)«Վրիպակը՝ նոր պատմության հնարավորություն»

Մանկական «սխալներից» կարող է ստացվել ինքնուրույն ստեղծագործություն, որի միջոցով երեխաներն անծանոթ իրականությունն են յուրացնում: Ցանկացած սխալ մի պատմություն հորինելու հնարավորություն է: Ամեն ինչից զատ՝ սխալների վրա ծիծաղելն արդեն իսկ դրանցից ձերբազատվել է նշանակում: «Տուն» բառի փոխարեն տղան գրել է «տուփ»: Ծիծաղում ենք և երևակայում. կար մի մարդ, որի տունը մի տուփ էր: Նա ապրում էր այդ տուփի մեջ, իսկ տեղ գնալիս իր հետ էր վերցնում:

6) «Ստեղծագործում ենք միասին»

Մասնակցում են բոլորը, համատեղ պատմություն են հորինում: Նախապես պատրաստված ստվարաթղթե քարտերի վրա տարբեր նկարներ ենք կպցնում: Երեխաներից մեկը առանց նայելու կապուկից մի քարտ է հանում: Քարտը հանողը սկսում է քարտի վրա եղած նկարի մասին երևակայական պատմություն հորինել, մյուսներն ուշադիր լսում են, որպեսզի շարունակեն: Հաջորդ երեխան իր վերցրած քարտի մասին է պատմում, բայց պետք է պատմության իր մասը նախորդի հետ կապի, և շարադրանքի հետագա ընթացքը կլինի նախորդի շարունակությունը: Խաղին մասնակցում են բոլորը, իսկ վերջինը հորինում է ավարտը:

7)«Ծանոթ հեքիաթների խառնաշփոթ»

Հանդիպում են Մոխրոտն ու Մատնաչափիկը, Քաջ Նազարն ու Անբան Հուռին, Սառցե թագուհին և Սպիտակաձյունիկը, նրանց արկածներն իրար են հյուսվում և նոր հունով ընթանում: Երեխաները հաճախ զվարճալի լուծումներ են գտնում, և դա նրանց շատ է ոգևորում:

8) «Ազատ խոսքի իրավունք»

Աշակերտները պատկերացնում են, որ իրենց սիրելի հեքիաթների հերոսները հավաքվել են հեքիաթային համաժողովի՝ նվիրված հեքիաթի հերոսների իրավունքներին: Նրանցից յուրաքանչյուրը գնում է ամբիոնի մոտ և ասում ... (նրանք պետք է խոսեք իրենց սիրելի հեքիաթի հերոսի անունից):

9) «Շուռ տված հեքիաթներ»

Երեխաներն իրենց շատ ծանոթ հեքիաթները ներկայացնում են անսովոր փոփոխությամբ: «Մոխրոտը» հեքիաթում խորթ մայրը բարի էր, ներող, աղջիկը՝ չար, անարդար: «Կարմիր գլխարկ»-ում չար աղջիկը մորաքրոջ տուն էր գնում, հանդիպում է աշխարհի ամենաբարի գայլին: Այսպիսով հեքիաթը այլ շարունակություն է ստանում, դառնում ավելի հետաքրքիր և զվարճալի:

10) «Երեխան՝ ծանոթ հեքիաթի հերոս»

Երեխաները սիրում են դառալ իրենց շատ ծանոթ և սիրած հեքիաթի հերոսը: Նրանք մասնակցում են գործողություններին, փոխում են սյուժեի ընթացքը, կատարում են սխրագործություններ, կռիվ են տալիս, հաղթում են չարին և հաստատում են բարին: Իրենք հեքիաթում ամենազոր են: Իրական լինելու համար իրադարձությունների վայրը ևս նրանց շատ ծանոթ վայր է վերցվում, օրինակ՝ իրենց խաղահրապարակը կամ բակը, մասնակցում են երեխային ծանոթ այլ մարդիկ՝ ընկերներից, ընտանիքի անդամներից:

11. **«Եթե ես միայն…»**

Աշակերտները պատկերացնում են իրենց անսովոր իրավիճակում և շարունակություն են ստեղծում (օրինակ՝ եթե ես միայն կարողանայի մտքեր կարդալ...)։

ԲԱՌԸ՝ ՈՐՊԵՍ ՈԳԵՇՆՉՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Գրական ստեղծագործությունը բառի արվեստն է, ուստի օգտագործում եմ այնպիսի ստեղծագործական առաջադրանք, ինչպիսին է գրական բառի, դրա իմաստի և ձևի վրա աշխատելը: Խոսքը թույլ է տալիս երեխաներին գիտակցել իրենց զգացմունքների աշխարհը և սովորեցնում է հասկանալ բառի առաջ բերած զգացողությունը։ Բառի արտահայտչական հնարավորությունները բացահայտելու համար երեխաները կատարում են հատուկ ստեղծագործական առաջադրանքներ: Նրանք պետք է բանավոր և գրավոր պատասխանեն նման հարցերի. «Ի՞նչ տրամադրություն եմ ունենում, երբ լսում եմ «աշուն», «խշշոց», «շրշյուն»: բառերը։ Ի՞նչ եմ զգում, երբ կարդում եմ «երկինք» բառը և այլն: Այսպիսով երեխան առնչվում է գրական ստեղծագործության ամենախոր գաղտնիքներից մեկին՝ այն հիասքանչ երևույթին, երբ ստեղծագործությունը ծավալվում է մեկ հատիկ բառից, որը անսովոր է, զգացողություններ է առաջ բերում:

Ամեն մի նոր հեղինակի ստեղծագործություն անցնելիս երեխաների ուշադրությունը հրավիրում եմ հեղինակի բառերի ընտրության վրա: Երեխաները գտնում են այս կամ այն արտահայտությունը տեքստերում, ըմբռնում և բացատրում են արտահայտչականությունը, օգտագործում են արտահայտիչ միջոցները իրենց խոսքում:

Բառի նկատմամբ ուշադրություն զարգացնելու համար երեխաներին կարելի է առաջարկել ստեղծագործության հիման վրա խաչբառ կազմել, դրանք ներկայացնել դասարանում և ընկերներին առաջարկել լուծել դրանք։

Ստեղծագործական առաջադրանքների համակարգում առանձնահատուկ տեղ է գրավում «Շփոթություն» խաղը։ Սա ստեղծագործ բառախաղ է։ Խաղի էությունը սա է.

գրատախտակին կամ առանձին թղթի վրա ստորակետերով առանձնացված մի քանի բառ է գրված։ Երեխաները պետք է ուշադիր կարդան բառերը, մտածեն և փորձեն հասկանալ, թե որ հեղինակի բառապաշարի բառերն են ընտրված, որ ստեղծագործողի ոճին է դա բնորոշ։

Առաջադրանք՝ «Նոր միտք»

Ծանոթ ստեղծագործությունից հանվում են բառեր և առաջարկվում է այդ բառերը օգտագործելով՝ նոր բանաստեղծություն հորինել։

Առաջադրանք՝ «Ամեն բառը՝ մի աշխարհ»
Ստեղծագործությունից հանված են բառեր, պահանջվում է յուրաքանչյուր բառի տալ յուրահատուկ մեկնաբանություն։ Ունկնդիրները որոշում են ամենալավ մեկնաբանությունը և ծափահարությամբ խրախուսում։

Առաջադրանք՝ «Բաց թողած բառ»

Ուսուցիչը կարդում է տեքստը և բաց թողնում մեկ բառ, երեխաները պետք է մտածեն և առաջարկեն ուրիշ իմաստալից բառ՝ համապատասխան տեղում։

Երևակայությունը զարգացնելու, բառերի հանդեպ խնամքով վերաբերմունք դաստիարակելու նպատակով օգտագործում եմ շատ գրական նյութեր՝ հանելուկներ, բանաստեղծություններ, բանաստեղծական երկխոսությունների ընտրանիներ և այլն։ Դպրոցական փոքր տարիքում երեխաները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում ինքնուրույն ստեղծագործելու նկատմամբ։ Բայց նախքան ինքնուրույն հանգավորել սովորելը նրանք պետք է կարողանան կարդալ պոեզիա, հետևել դրանց կառուցմանը, գեղարվեստական առանձնահատկություններին, սովորել տեսնել պատկերավորման միջոցները (համեմատություն, մակդիր, փոխաբերություն, անձնավորում), որոնք օգնում են հասկանալ հեղինակի զգացմունքները, բառերի ճիշտ կիրառությունները։ Հատուկ վարժությունների օգնությամբ սովորողները սովորում են հանգավորել բառերը, ավելացնել հանգավոր տողեր։ Կան այսպիսի վարժություններ.

1.Նախադասությունը ավարտի՛ր այնպիսի բառով, որը նախադասության ներսում եղած որևէ բառի հետ հանգավորվի.

2.Տրված բառի համար գտի՛ր հանգով համապատասխան զույգ (ճառագայթ - ..., ճանապարհ-…).

3.Բառերի շարքում միացրու՛ հանգավորված բառերը.

4.«Վանկային աճուրդ»՝ - կհաղթի նա, ով կանչում է վերջին հանգավորված բառը (ասեղ-ահեղ-աղեղ…., լուսավոր, թևավոր-ձևավոր….).

5.Լրացրու՛ բանաստեղծությունը՝ հանգավորելով տողերի վերջին բառերը.

6.Վերականգնի՛ր ցրված բանաստեղծությունը.

7.Ավարտի՛ր բանաստեղծության երկրորդ տողը.

«Երկինքը այսօր մաքուր է ու պարզ,

Թվում է հոգուս …… /մի չքնաղ երազ/.

8.Տրված են հանգավորված բառեր, դրանք կիրառելով՝ ստեղծի՛ր բանաստեղծություն.

Բերել-ներել, երգեր-բերքեր

9.«Մեկ տողի մրցույթ»-՝ բանաստեղծության առաջին տողը տրված է, մենք վերջաբան ենք տալիս և որոշում ամենահաջող տարբերակը։

«Հանգ» հասկացությունն ամրապնդելու համար ստեղծագործական աշխատանքներում օգտագործում եմ ժողովրդական բանահյուսությունը, մանավանդ առածներն ու հանելուկները ։ Երեխաները պատրաստակամորեն և հաջողությամբ

հանգավորում են իրենց հանելուկները, մտածում և ստեղծում են հանգավոր հանելուկներ։

Հանելուկների վրա աշխատելը մտածողության, սրամտության և երևակայության, տրամաբանության ինքնուրույն զարգացման վարժություն է։ Երեխաները սովորում են խոսել վառ, պատկերավոր, պարզ բառապաշարով։ Հանելուկների կիրառմամբ դասերը հետաքրքիր են և չեն հոգնեցնում սովորողներին՝ տալով նրանց մտքի համար օգտակար վարժություններ։ Դասին աշխատանքն իրականացվում է մի քանի փուլով՝ հանելուկների ստեղծում, գուշակում, դիտարկում։ Կարելի է առաջադրանքը կատարել և՛ ինքնուրույն, և՛ խմբով։ Գովեստի են արժանանում այն աշակերտները, որոնք կարողանում են ճիշտ տեղում գտնել ճիշտ բառը, գեղեցիկ հանգավորել հանելուկները։

Կա նաև մեկ ուրիշ տարբերակ. երեխաներն իրար բառեր են փոխանցում, որոնց վերաբերյալ պետք է հանելուկ ստեղծվի։ Աշակերտները գործի են դնում իրենց երևակայությունն ու տրամաբանությունը, բոլորը աշխատում են առավելագույնս գրավիչ ձև տալ հանելուկին, գրել հանգավորված։

«Ինչու՞ են երեխաները այդքան հանելուկներ սիրում,- հարցնում է Ջանի Ռոդարին։- Վստահեցնում եմ, որ գլխավոր պատճառը հետևյալն է. հանելուկները խտացված, գրեթե խորհրդանշանային ձևի մեջ արտացոլում են իրականությունը ճանաչելու երեխայի փորձը։ Երեխաների համար աշխարհը լի է խորհրդավոր առարկաներով, անհասկանալի իրադարձություններով, երևույթներով, անհասանելի ձևերով։ Հենց երեխայի ներկայությունն աշխարհում գաղտնիք է, որ նա դեռևս պետք է պարզի, մի հանելուկ, որ հուշող հարցերի միջոցով դեռ պետք է լուծի։ Եվ այս ճանաչողության գործընթացը հաճախ հենց անսպասելի հայտնագործության, անակնկալի ձևով է տեղի ունենում։ Այստեղից էլ այն հաճույքը, որ երեխան բուն որոնումից և իրեն սպասող անակնկալից է ստանում. խաղի ընթացքում նա կարծես մարզվում է»։[2]

ԳՐԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ՎՐԱ ԱՇԽԱՏԱՆՔ

Գրական ստեղծագործությունները ընթերցելուց հետո տրվում են ստեղծագործական բնույթի առաջադրանքներ, որոնք պահանջում են սովորողների ինքնուրույն գործունեություն՝ առանձնացնել և կարդալ առանձին դրվագներ, բնութագրել կերպարները, համեմատել նրանց խոսքը, գործողությունները: Աշակերտները սովորում են արտահայտվել հեղինակի, հերոսների, ընթերցողի տեսանկյունից: Երեխաները այս կամ այն հերոսի աչքերով տեսնում են կյանքի այս կամ այն երևույթը: Հնարավոր են տարբեր մեկնաբանություններ, երբեմն նույնիսկ անսպասելի, քանի որ դրանք ստեղծագործական են:

Դասարանը կարելի է բաժանել 3 խմբի՝ բանախոսներ, լրագրողներ, փիլիսոփաներ:

Բանախոսները իրենց պատկերացնում են հերոսի դերում, աշխարհը տեսնում են նրա աչքերով, մյուսներին հասկանալի են դարձնում նրա ներաշխարհը: Պատկերացնում են իրենց ստեղծագործության հերոսի տեղում և պատմում են նրա մասին առաջին դեմքով:

«Լրագրողները» հարցեր են տալիս ստեղծագործության «հերոսներին»: Հարցերը պետք է լինեն անսովոր և հետաքրքիր: «Հերոսների» խնդիրն է տալ ամբողջական, լավ պատասխան:

Փիլիսոփաները խոսում են ստեղծագործության մասին և արտահայտում իրենց մտքերը: Նրանք կարող եք ապացուցել և պաշտպանել իրենց տեսակետը:

Գրական երկի ընթերցանությունը ենթադրում է բոլոր սովորողների ներգրավվածությունը ստեղծագործական գործունեության մեջ: Կախված հակումներից՝ յուրաքանչյուր երեխա ստեղծագործական գործունեության մեջ կարող է արտահայտվել տարբեր ձևերով՝ որպես գրող, քննադատ, նկարազարդող, ընթերցող, դերասան:

Ստեղծագործական գործունեությունը ի հայտ է բերում երեխաների գրական և ստեղծագործական հմտությունները, վարժությունները և առաջադրանքները թույլ են տալիս քայլ առ քայլ ձևավորել ստեղծագործական առաջադրանքներ կատարելու կարողություն:

Գրական տեքստերի հետ աշխատելիս հիմնական մեթոդը ստեղծագործական ընթերցանությունն է: Ընթերցանության ընթացքում երևակայության միջոցով ստեղծված պատկերները ընթերցողի ստեղծագործական գործունեության արդյունք են և խթանում են խոսքային ստեղծագործականությունը: Այն կարելի է ներկայացնել՝ ընթերցվածի մասին տպավորություններ արտահայտելով, կյանքից նմանատիպ դեպք հիշելով, շարունակություն հորինելով, նկարագրություններով, ստեղծագործական վերապատմումով:

Դադարներոով ընթերցանությունը խթանում է հետաքրքրասիրությունը, տրամադրում երևակայությունը գործի դնելուն և հետաքրքիր լուծումներ առաջ քաշելուն: Սյուժեի զարգացման որոշակի փուլում ուսուցիչն ընդհատում է ընթերցանությունը և տալիս նմանատիպ հարցեր՝ ինչպե՞ս պետք է գործի հերոսը դժվար իրավիճակում, ի՞նչ շարունակություն է ենթադրվում, իրենք ինչպե՞ս կշարունակեին և այլն:

Ընթերցանությունը ավարտելուց հետո համեմատում են ստեղծագործության շարունակությունը իրենց առաջարկածի հետ, հասկանում են, թե ինչքանով են ճիշտ կռահել, ում շարունակությունն է, որ ավելի լավ է ստացվել:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

Սովորողների ստեղծագործական ներուժը առավելագույնս օգտագործելու, գեղարվեստական խոսքի նկատմամբ հետաքրքրություն զարգացնելու համար կիրառվում է գրական ստեղծագործությունների թատերականացում՝ հատվածաբար կամ ամբողջությամբ: Յուրաքանչյուր աշակերտ, կենդանացնելով որոշակի կերպար,

ցուցաբերում է ստեղծագործականություն, քանի որ դառնում է հեղինակի մտահղացման մեկնաբանը։

Առաջին դասերից փորձում եմ երեխաներին գրավել խաղ-ներկայացումով։ Դերերը բաշխվում են, եթե հեքիաթ է բեմադրվում, նաև երեխաներին տրվում են հերոսների դիմակներ։ Աշխատանքի այս ձևն օգնում է երեխաներին հոգեբանորեն ազատվել բարդույթներից, ինքնավստահություն զգալ։

Կարող ենք նաև հեքիաթ բեմադրել տիկնիկների օգնությամբ։ Նման աշխատանքը օգնում է աշակերտին հետևել իր շարժումներին և հնարավորինս արտահայտիչ դարձնել տիկնիկի պահվածքը, թույլ է տալիս կատարելագործվել և դրսևորել հույզեր ։

Որևէ գործ բեմադրելիս երեխաները կերպարները պատկերում են համապատասխան առոգանությամբ, դեմքի արտահայտությամբ, կեցվածքի և ժեստերի օգնությամբ։ Դերախաղի միջոցով հաղորդվում են հերոսների հուզական վիճակը, բնավորության գծերը։

Դերերով կարդալ հնարավոր է ցանկացած ստեղծագործության վրա աշխատելիս, աշակերտները առանձնապես սիրում են երկխոսությունները ներկայացնել։ Կարելի է նաև կարդալ մի հատված։ Գրական գործը ամբողջությամբ դերային խաղով ներկայացնելիս աշխատանքի մեջ ներգրավվում են մեծ թվով աշակերտներ։ Վերանում է կարդալու վախը, երեխաներն ավելի անկաշկանդ են դառնում, ստեղծագործականություն դրսևորելով՝ նրանք կերպարները ներկայացնում են սեփական տեսանկյունից։ Կարելի է բարդացնել դերախաղը՝ խնդրելով աշակերտներին ոչ միայն արտասանել յուրաքանչյուր կերպարի բառերը ճիշտ առոգանությամբ, այլև ցույց տալ դեմքի արտահայտությունները և հերոսների ժեստերը։

Շատ հետաքրքիր կլինի գրական գործը ներկայացնել մնջախաղի ձևով։ Աշակերտների համար անսովոր այս ձևը օգնում է ստեղծագործաբար մոտենալ, առանց խոսքի, միայն դեմքի արտահայտություններով, ժեստերով, շարժումներով տեղ հասցնել ստեղծագործության գաղափարը, հերոսների հույզերը և զգացմունքները։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մայրենի» առարկայի միջոցով հնարավոր է զարգացնել աշակերտների ստեղծագործական կարողությունները: Արդի ժամանակաշրջանը պահանջում է ունենալ ազատ, ստեղծագործ սերունդ, իսկ այդ գործում մեծ է մանկավարժի դերը: Նա կարող է ծանրակշիռ ներդրում ունենալ աշակերտի ստեղծագործական կարողությունների զարգացման գործում:

Հարկավոր է ստեղծագործական վերաբերմունք մշակել ուսման նկատմամբ: Ուսումը պետք է վերածվի հաճելի զբաղմունքի, ոչ թե անցանկալի պարտականության: Ուսումը զուգակցելով ստեղծագործելու հետ՝ աշակերտը կփոխի իր վերաբերմունքը, կմեծանա նորը իմանալու և ճանաչելու ցանկությունը, կապրի նորը բացահայտելու բերկրանքը:

Ստեղծագործաբար մոտենալով աշխատանքին՝ աշակերտը ձեռք կբերի հաստատակամ գործելաոճ, նպատակասլացություն, նախաձեռնողականություն: Աշակերտը կդառնա մտքով ճկուն, ինքնատիպ, ավելի ինքնավստահ և հաջողակ:

Մեծացնելով աշակերտի ճիշտ կազմակերպված ստեղծագործական գործունեությունը, նրա ներգրավվածությունը ուսումնական գործընթացում, նպաստում ենք նրա ստեղծագործական նախաձեռնողականությանը և գիտելիքի հաջող յուրացմանը, ինքնավստահություն հաղորդում նրան, զարգացնում ենք ինքնուրույն և ինքնատիպ մտածողությունը:

Ծանոթագրություններ

1-Ա. Նալչաջյան, «Հոգեբանական բառարան», էջ 191

2- Ջանի Ռոդարի, «Ստեղծագործական երևակայության քերականություն», էջ 55

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ջանի Ռոդարի, «Ստեղծագործական երևակայության քերականություն», «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, Երևան, 2011 թ.

Էդվարդ դե Բոնո, «Նոր մտքի ծնունդը», «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1982 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

ՄՈՒՏՔ 3

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 4

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐ 5

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ 6

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ՏԱՐԲԵՐ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ 6

ԲԱՌԸ՝ ՈՐՊԵՍ ՈԳԵՇՆՉՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ 10

ԳՐԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ՎՐԱ ԱՇԽԱՏԱՆՔ 14

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ 15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ..... 17

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 18